Արձանագրություն N 3

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

03.05.2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Առուշանյանը, Գ. Մեհրաբյանը, Հ. Ռամազյանը Ա. Գևորգյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. **«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 02.05.2019 թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում պատասխանելու վերաբերյալ**

(Ա. Խաչիկյան)

Պարզաբանման պահանջի տեքստ հ 1.

«Երևանի քաղաքապետարան»-ի կարիքների համար՝ «կենցաղային թափոնների կոնտեյներների» ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/6 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի հարգելի քարտուղար,

«Երևանի քաղաքապետարան»-ի կարիքների համար՝ «կենցաղային թափոնների կոնտեյներների» ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/6 ծածկագրով բաց մրցույթի շրջանակում, հրավերի հավելված N 7-ի հավելված 1-ում ներկայացված տեխնիկական բնութագրի՝ «1 «կենցաղային թափոնների կոնտեյներներ»» չափաբաժնի մասով, հարկ ենք համարում նշել, որ համաձայն EN 840 ստանդարտի՝ 1,0 – 1,1 մ3 կոնտեյների չափերը պետք է լինեն.

- Ընդհանուր երկարությունը՝ 1370 մմ (+/- 10),
- Ընդհանուր խորությունը՝ առավելագույնը 1115 մմ,
- Ընդհանուր բարձրությունը ՝ առավելագույնը 1470 մմ,
- Հայտարարված քաշի թույլատրելի շեղումը՝ +/- 5 տոկոս:

Վերոնշյալ ստանդարտի վերաբերյալ փաստաթղթերը ներկայացվում է սույն գրությանը կից:

Հաշվի անելով վերոգրյալը, խնդրում ենք Ձեզ դիտարկել ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/6 ծածկագրով բաց մրցույթին հետևյալ չափորոշիչներով «կենցաղային թափոնների կոնտեյներներ» ներկայացնելու հնարավորությունը.

- Ծավալը՝ 1,0 – 1,1 մ3,
- Երկարությունը՝ 1375 մմ (+/- 2 տոկոս),
- Խորությունը՝ 1075 մմ (+/-2 տոկոս),
- Բարձրությունը՝ 1355 մմ (+/-2 տոկոս),
- Քաշը (ներառյալ կափարիչը)՝ 50 կգ (+/-5 տոկոս),

- Բեռնատարողությունը՝ 440 կգ,
- Գույնը՝ մուգ կանաչ (RAL 6020),
- Անիվների տրամագիծը՝ 200մմ:

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Կենցաղային թափոնների կոնտեյներների» ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի հավելված 1-ում ներկայացված տեխնիկական բնութագրի չափորոշիչների վերաբերյալ առաջարկների մասով հայտնում ենք, որ առաջարկված բոլոր չափորոշիչները համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրի չափորոշիչներին և ընդունելի են մեր կողմից՝ բացի կոնտեյների քաշի վերաբերյալ ներկայացված պահանջի չափորոշիչից:

ԵՀ 840 ստանդարտը պարունակում է կոնտեյների քաշը 52.5 կգ պահանջ: Այդ կապակցությամբ Ձեր առաջարկությունը կոնտեյների քաշի վերաբերյալ ընդունելի չէ և մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի չափորոշիչները ամբողջությամբ համապատասխանում են ԵՀ 840 ստանդարտի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Խաչիկյան
Անդամներ՝		Վ. Առուշանյան
		Գ. Մեհրաբյան
		Հ. Ռամազյան
		Ա. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան